ԷԼԵՆԱ ՖԵՐԱՆՏԵ

Իմ հանճարեղ ընկերուհին

ՎԵՊ

Թարգմանությունն իտալերենից՝
Ջեննի Ֆիլյանի

ԵՐԵՎԱՆ
2021

BookMark

ՀՏԴ 821.131.1-31 Ֆերանտե
ԳՄԴ 84(4Իտ=473.1)-44
Ֆ 470

Ֆ 470 Ֆերանտե Էլենա
Իմ հանճարեղ ընկերուհին / Է. Ֆերանտե.- Եր.: Newmag, 2021.- 328 էջ:

Էլենա Ֆերանտեն ժամանակակից իտալացի գրող է: Նրա ինքնությունը մինչև այժմ անհայտ է, թեև նա բավականաչափ հայտնի հեղինակ է: Համաշխարհային ճանաչում ստացել է «Նեապոլիտանական քառյակի» շնորհիվ: Այդ 4 վեպերի մեջ առաջինը հենց այս գիրքն է:

Նեապոլի արվարձանային աղքատ, բայց աշխույժ թաղամասում 1950-ականներին սկսված պատմությունը շարունակվում է գրեթե 60 տարի: Գլխավոր հերոսներն են տաքարյուն Լիլան և գրքի հեղինակ Էլենան: Նրանք դառնում են կին, մայր, առաջնորդ և այդ ամբողջ ընթացքում պահպանում են իրենց բարդ, երբեմն նաև հակասական ընկերությունը:

Առաջին վեպը հյուսում է Լիլայի և Էլենայի պատմությունը՝ սկսած 10 տարեկանում նրանց բախտորոշ հանդիպումից մինչև դպրոց և պատանեկություն: «Իմ հանճարեղ ընկերուհին» վեպը ընկերության էությունը քննող հուզիչ խորհրդածում է, նաև պատմություն մի ամբողջ ազգի մասին: Այս երկու կանանց կյանքի պատմության միջոցով Ֆերանտեն պատմում է թաղամասի, քաղաքի և երկրի մասին, որոնք, ժամանակի ընթացքում վերափոխվելով, փոխում են նաև երկու գլխավոր հերոսուհիների փոխհարաբերությունները:

ՀՏԴ 821.131.1-31 Ֆերանտե
ԳՄԴ 84(4Իտ=473.1)-44

ISBN 978-9939-884-19-6
Էլենա Ֆերանտե «Իմ հանճարեղ ընկերուհին» © 2021, «Նյու Մեգ» ՍՊԸ
Elena Ferrante L'amica geniale © 2011 by Edizioni E/O

Շապիկի լուսանկարը © Էդուարդո Կաստալդոյի
Cover photographs © Eduardo Castaldo

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Գրքի թարգմանությունն իրականացվել է Edizioni e/o (Հռոմ, Իտալիա) գրական գործակալության հետ կնքված պայմանագրով:

Բովանդակություն

Գործող անձինք 13

Նախաբան. Վերացնել հետքերը 17

Մանկություն. Դոն Աքիլեի պատմությունը 23

Պատանեկություն. Կոշիկների պատմությունը 83

BookMark

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Չերուլո ընտանիք (կոշկակարի ընտանիքը)
Ֆերնանդո Չերուլո, կոշկակար
Նունցիա Չերուլո, Լիլայի մայրը
Ռաֆայելա Չերուլո, բոլորի համար՝ Լինա, Էլենայի համար՝ Լիլա
Ռինո Չերուլո, Լիլայի ավագ եղբայրը, նույնպես կոշկակար
Ռինո է անվանվելու նաև Լիլայի զավակներից մեկը
Այլ երեխաներ

Գրեկո ընտանիք (դռնապանի ընտանիքը)
Էլենա Գրեկո, նույն ինքը *Լենուչա* կամ *Լենու*, առաջնեկը, այնուհետև *Պեպե, Ջանի* և *Էլիզա*
Հայրը, դռնապան քաղաքապետարանում
Մայրը, տնային տնտեսուհի

Կարաչի ընտանիք (դոն Աքիլեի ընտանիքը)
Դոն Աքիլե Կարաչի, հեքիաթների մարդակերը
Մարիա Կարաչի, դոն Աքիլեի կինը
Ստեֆանո Կարաչի, դոն Աքիլեի որդին, ընտանեկան երշիկագործ
Պինուչա և *Ալֆոնսո Կարաչիներ*, դոն Աքիլեի մյուս զավակները

Պելուզո ընտանիք (ատաղձագործի ընտանիքը)
Ալֆրեդո Պելուզո, ատաղձագործ
Ջուզեպինա Պելուզո, Ալֆրեդոյի կինը
Պասկուալե Պելուզո, Ալֆրեդոյի և Ջուզեպինայի ավագ որդին, որմնադիր
Կարմելա Պելուզո, նույն ինքը՝ *Կարմեն*, Պասկուալեի քույրը, վաճառողուհի արդուզարդի խանութում
Այլ երեխաներ

BookMark

Կապուչո ընտանիք (խենթ այրու ընտանիքը)
Մելինա, Լիլայի մոր ազգականուհին, խենթ այրի
Մելինայի *ամուսինը*, արկղեր բեռնաթափող պտուղբանջարեղենի շուկայում
Ադա Կապուչո, Մելինայի դուստրը
Անտոնիո Կապուչո, նրա եղբայրը, մեքենագործ
Այլ երեխաներ

Սարատորե ընտանիք (բանաստեղծ-երկաթուղայինի ընտանիքը)
Դոնատո Սարատորե, հսկիչ
Լիդիա Սարատորե, Դոնատոյի կինը
Նինո Սարատորե, Դոնատոյի և Լիդիայի հինգ զավակներից ավագը
Մարիզա Սարատորե, Դոնատոյի և Լիդիայի դուստրը
Պինո, *Կլելիա* և *Չիրո Սարատորեներ*, Դոնատոյի և Լիդիայի կրտսեր զավակները

Սկանո ընտանիք (մրգավաճառի ընտանիքը)
Նիկոլա Սկանո, մրգավաճառ
Ասունտա Սկանո, Նիկոլայի կինը
Էնցո Սկանո, Նիկոլայի և Ասունտայի որդին, նույնպես մրգավաճառ
Այլ երեխաներ

Սոլարա ընտանիք (Սոլարա նույնանուն բար-հրուշակարանի սեփականատիրոջ ընտանիքը)
Սիլվիո Սոլարա, բար-հրուշակարանի սեփականատերը
Մանուելա Սոլարա, Սիլվիոյի կինը
Մարչելո և *Միքելե Սոլարաներ*, Սիլվիոյի և Մանուելայի որդիները

Սպանյուոլո ընտանիք (հրուշակագործի ընտանիքը)
Սինյոր Սպանյուոլո, հրուշակագործ Սոլարա բար-հրուշակարանում
Ռոզա Սպանյուոլո, հրուշակագործի կինը
Ջիլյոլա Սպանյուոլո, հրուշակագործի դուստրը
Այլ երեխաներ

Ջինո, դեղագործի որդին

Ուսուցիչներ
Ֆերարո, ուսուցիչ և գրադարանավար
Օլիվիերո, ուսուցչուհի
Ջերաչե, գիմնազիայի դասախոս
Գալիանի, լիցեյի դասախոս
Նելլա Ինկարդո, ուսուցչուհի Օլիվիերոյի զարմուհին Իսկիայից

BookMark

ՆԱԽԱԲԱՆ

Վերացնել հետքերը

BookMark

1

Այս առավոտ ինձ զանգահարեց Ռինոն: Մտածեցի՝ կրկին փող է ուզելու, ցանկանում էի մերժել, մինչդեռ հեռախոսազանգի պատճառն այլ էր. մայրն անհետացել էր:

— Երբվանի՞ց:

— Արդեն երկու շաբաթ է:

— Եվ հիմա՞ ես ինձ զանգահարում:

Ըստ երևույթին ձայնս նրան անբարյացակամ թվաց, չնայած զայրացած չէի, ո՛չ էլ վրդովված, միայն թեթև հեգնանք կար ձայնիս մեջ: Նա փորձեց արդարանալ, բայց անվստահ, շփոթահար մե՛կ խոսում էր բարբառով, մե՛կ անցնում իտալերենի: Համոզված էր, որ մայրը, ինչպես միշտ, շրջում է Նեապոլում:

— Գիշերը նո՞ւյնպես:

— Դե, նրան ճանաչում ես:

— Ճանաչում եմ, բայց երկու շաբաթվա բացակայությունը քեզ սովորակա՞ն է թվում:

— Այո: Դու նրան վաղուց չես տեսել: Նրա վիճակը վատացել է. գրեթե չի քնում, գալիս-գնում է, անում այն, ինչ իրեն հարմար է:

Նա այնուամենայնիվ անհանգստացել էր: Հնարավորին չափ հարցուփորձ էր արել բոլորին, շրջել էր հիվանդանոցներում, նույնիսկ ոստիկանություն էր դիմել, բայց ապարդյուն, մայրը ոչ մի տեղ չկար: Լավ տղա է, խոսք չկա, քառասունին մոտ, գիրուկ տղամարդ, որ կյանքում երբեք չի աշխատել, միայն, մութ գործերով զբաղվելով, փող է մսխել: Պատկերացրի, թե ինչպես է փնտրել մորը. ոչ մի կերպ: Խելք չունի, սովոր է մտածել միայն իր մասին:

— Նա քեզ մոտ չէ՞,– անսպասելիորեն հարցրեց:

Նրա մա՞յրը: Այստե՞ղ, Թուրինո՞ւմ: Նա արդեն գիտեր պատասխանն ու հենց այնպես խոսում էր: Ինքը սիրում էր ճամփորդել, մի տասն անգամ հյուրընկալվել էր ինձ մոտ և միշտ առանց հրավերի: Մինչդեռ մորը, ընդհակառակը, ես ուրախությամբ կընդունեի՝ Նեապոլից դուրս չէր եկել երբեք:

— Ոչ, նա ինձ մոտ չէ,– պատասխանեցի:

— Իրո՞ք:

— Ռինո՛, արդեն ասացի, նա այստեղ չէ:

— Բայց ո՞ւր է գնացել:

Նա սկսեց հեծկլտալ, և ես նրան թույլ տվեցի խաղալ հուսահատ լացի իր տեսարանը՝ սկզբում՝ կեղծ, բայց հետո՝ միանգամայն անկեղծ: Երբ լռեց, ասացի.

— Խնդրում եմ, գոնե մեկ անգամ արա այնպես, ինչպես մայրդ կցանկանար, մի՛ փնտրիր նրան:

— Ի՞նչ ես ասում:

— Ինչ որ ասացի: Դա անօգուտ է: Սովորիր ապրել մենակ և ինձ մի՛ փնտրիր:

Ես կախեցի լսափողը:

2

Ռինոյի մայրը Ռաֆայելա Չերուլոն է, բայց բոլորը նրան Լինա են կոչել՝ բացի ինձանից. երբեք չեմ անվանել նրան ո՛չ առաջին, ո՛չ երկրորդ անունով: Վաթսուն տարուց ավելի նա ինձ համար Լիլա է: Եթե հանկարծ նրան անվանեի Լինա կամ Ռաֆայելա, կմտածեր, որ մեր ընկերությունն ավարտվել է:

Արդեն ոչ պակաս երեսուն տարի է, որ կրկնում է, թե կամենում է անհետանալ հետքեր չթողնելով. միայն ես գիտեմ՝ ինչ նկատի ունի: Նա երբեք չի մտածել փախուստի, ինքնությունը կեղծելու մասին, չի երազել նոր կյանք սկսել: Երբեք չի մտածել նաև ինքնասպանության մասին. նույնքան նողկալի միտք, որքան և այն, որ Ռինոն ստիպված պիտի լինի հոգալ իր հուղարկավորության ծախսերը: Նրա մտքինն ուրիշ էր. ուզում էր գոլորշիանալով հալվել մինչև վերջին բջիջը, որպեսզի իրենից ոչինչ չմնար: Եվ քանի որ նրան լավ եմ ճանաչում, համենայն դեպս այդպես եմ կարծում, չեմ կասկածում, որ գտել է միջոցն աշխարհում իրենից անգամ մի մազ չթողնելու:

3

Անցավ մի քանի օր: Ես ստուգեցի իմ էլեկտրոնային փոստը, առանց մեծ հույսերի՝ նայեցի նաև փոստարկղի պարունակությունը: Ես նրան շատ հաճախ էի գրում, բայց գրեթե չէր պատասխանում, ինչը մեզ համար սովորություն էր դարձել: Նա նախընտրում էր հեռախոսով խոսել ու շաղակրատել գիշերը մինչև լույս, երբ Նեապոլ էի գնում:

Ես աչքի անցկացրի իմ բոլոր արկղերը, մետաղե տուփերը, որոնցում մանր-մունր բաներ եմ պահում. շատ քիչ բան: Ես դեն եմ նետել բազմաթիվ իրեր՝ հատկապես նրան վերաբերող. նա գիտի այդ մասին: Հետո պարզեցի, որ նրանից ինձ մոտ ոչինչ չի մնացել՝ ո՛չ դիմանկար, ո՛չ երկտող, ո՛չ որևէ հիշարժան իր: Ինքս էլ զարմացա: Հնարավո՞ր է, որ այսքան տարվա ընթացքում նա ինձ ոչինչ չթողներ, կամ, ինչը ցավալի է, ես չկամենայի նրանից որևէ բան պահել որպես հիշատակ: Ուրեմն հնարավոր է:

Այս անգամ, թեև դժկամորեն, ինքս զանգահարեցի Ռինոյին: Նա չէր պատասխանում ո՛չ տան, ո՛չ էլ բջջային հեռախոսներին: Ինձ զանգեց երեկոյան, իրեն հարմար պահի: Դատելով ձայնից՝ փորձում էր իմ մեջ մեղքի զգացում արթնացնել:

— Տեսա, որ զանգել ես: Նորություններ ունե՞ս:

— Ոչ: Իսկ դո՞ւ:

— Ոչ մի:

Սկսեց ինչ-որ հիմարություններ դուրս տալ. իբր ուզում է մասնակցել հեռուստատեսային մի հաղորդման, որտեղ կորած մարդկանց են որոնում, էկրանից դիմել մորը, ներողություն խնդրել, աղերսել, որ վերադառնա:

Ես համբերատար լսելով ասացի.

— Դու նրա զգեստապահարանը նայե՞լ ես:

— Ինչի՞ համար:

Բնականաբար այդ պարզ գաղափարը նրա մտքով բոլորովին չէր անցել:

— Գնա՛, նայի՛ր:

Քիչ անց նա տեղեկացրեց, որ պահարանում ոչինչ չկա մոր հագուստներից՝ ո՛չ ամառային, ո՛չ ձմեռային, միայն հին կախիչներն էին մնացել: Ես նրան խորհուրդ տվեցի զննել ամբողջ տունը: Նույնիսկ կոշիկներն էին անհետացել, նաև փոքրաթիվ գրքեր: Անհետացել էին բոլոր լուսանկարները, տեսագրությունները: Անհետացել էին նրա համակարգիչն ու նույնիսկ

հին ձայնասկավառակները, որոնք վաղուց այլևս չէին գործածվում, բոլոր իրերն էլեկտրոնիկայի մոգուհու, որը հմտորեն աշխատում էր ցանկացած հաշվիչ սարքավորումով դեռևս վաթսունականների վերջերին, պերֆոքարտերի դարաշրջանում: Ռինոն ապշած էր, երբ ասացի.

— Մի՛ շտապիր, լա՛վ փնտրիր և, եթե գտնես թեկուզ մի հերակալ, զանգահարի՛ր ինձ:

Նա ինձ զանգահարեց հաջորդ օրը շատ հուզված:

— Ոչինչ չկա:

— Ընդհանրապե՞ս...

— Ոչ մի բան: Նա իրեն կտրել-հանել է բոլոր լուսանկարներից, որոնցում մենք միասին ենք, նույնիսկ իմ փոքր ժամանակվա:

— Դու լա՞վ ես փնտրել:

— Ամեն տեղ:

— Նկուղո՞ւմ էլ:

— Արդեն քեզ ասացի, ամեն տեղ: Անհետացել է նույնիսկ փաստաթղթերով տուփը՝ հին ծննդյան վկայականներ, հեռախոսային ընկերության հետ պայմանագրեր, անդորրագրեր: Ի՞նչ է այս ամենը նշանակում: Մեզ կողոպտե՞լ են: Ի՞նչ են փնտրել: Ի՞նչ են ուզում մեզանից:

Ես հանգստացրի նրան, հավաստիացրի, որ պետք չէ վախենալ: Հատկապես իրենից ինչ-որ մեկը որևէ բան դժվար թե ուզի:

— Կարելի՞ է գալ քեզ մոտ որոշ ժամանակով:

— Ոչ:

— Խնդրում եմ, բոլորովին չեմ կարողանում քնել:

— Քեզ տիրապետի՛ր, Ռինո՛: Նույնիսկ չգիտեմ, թե ինչով քեզ օգնեմ:

Ես կախեցի լսափողը և չպատասխանեցի, երբ նա նորից զանգեց: Ապա նստեցի գրասեղանի առաջ:

«Լիլան, ինչպես միշտ, չափն անցնում է»,– մտածեցի ես:

Շատ լայն առումով հասկանում է, թե ինչ է նշանակում հետք չթողնել: Ցանկացել է ոչ միայն անհետանալ վաթսունվեց տարեկանում, այլև իսպառ ջնջել իր ապրած կյանքը:

Ես սաստիկ զայրացած էի:

«Կտեսնենք, թե այս անգամ ով՝ ում»,– ասացի ինքս ինձ: Միացրի համակարգիչն ու սկսեցի գրել մեր պատմությունը՝ մանրամասնորեն, այն ամենը, ինչ պահպանվել էր հիշողությանս մեջ:

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Դոն Աքիլեի պատմությունը

BookMark

1

Մեր ընկերությունը սկսվեց այն օրը, երբ Լիլան ու ես որոշեցինք բարձրանալ մութ սանդուղքներով, աստիճան առ աստիճան, հարկ առ հարկ, որոնք տանում էին դոն Աքիլեի բնակարան:

Հիշում եմ բակը մանուշակագույն լույսի մեջ, գարնանային տաք երեկոյի բույրերը: Մայրերն ընթրիք էին պատրաստում, տուն գնալու ժամանակն էր, բայց մենք ուշանում էինք. ինչպես միշտ, առանց իրար բառ անգամ ասելու՝ հերթական մրցակցությունն էինք սկսել: Արդեն տևական ժամանակ դպրոցում և դպրոցից դուրս մենք միայն դրանով էինք զբաղված: Լիլան մտցնում էր ձեռքը ջրթող խողովակի սև բացվածքից ներս, ես անմիջապես նույնն էի անում սրտի դողով՝ հուսալով, որ ուտիճները մաշկիս վրա չեն բարձրանա, և առնետներն ինձ չեն կծի: Լիլան մագլցում էր մինչև սինյորա Սպանյուոլոյի առաջին հարկի պատուհանը, կախվում երկաթե ձողից, որին լվացքի պարանն էր կապված, ճոճվում էր, ապա ցած թռչում, ես մայթի վրա նույն բանն էի կրկնում անմիջապես, չնայած մտավախություն ունեի, որ կարող եմ ընկնել ու վնասվել:

Լիլան մաշկի տակ էր խրում ժանգոտած ֆրանսիական զարդասեղը, որ, հայտնի չէ, թե երբ, գտել էր փողոցում և պահում էր գրպանում, որպես փերու նվեր, իսկ ես նայում էի, թե ինչպես էր մետաղե ասեղը սպիտակավուն անցք բացում նրա ափի մեջ, և, երբ այն հանում ու ինձ էր մեկնում, նույն բանն էի անում:

Ինչ-որ պահի նա երկակի հայացքով զննեց ինձ՝ սևեռուն, աչքերը կկոցած, և ուղղվեց դեպի այն շենքը, որտեղ ապրում էր դոն Աքիլեն: Ակամա վախից սառեցի: Դոն Աքիլեն հեքիաթների մարդակերն էր, ինձ կտրականապես արգելված էր մոտենալ, խոսել նրա հետ, նայել, լրտեսել նրան, պարզապես պետք էր ձևացնել, ասես գոյություն չունեին ո՛չ ինքը, ո՛չ իր

ընտանիքը: Մեր տանը, և ոչ միայն մեր, նրա նկատմամբ կային թե՛ վախ, թե՛ ատելություն, ես չէի հասկանում, թե ինչն է պատճառը: Երբ հայրս խոսում էր նրա մասին, ես պատկերացնում էի մանուշակագույն պալար-ներով պատված մի հսկա կատաղի հրեշ՝ հակառակ «դոն» բառի, որն ինձ անասելի հարգանք էր ներշնչում: Չգիտեմ՝ ինչից էր ստեղծված այդ արարածը՝ երկաթից, ապակուց, գուցե եղինջից, բայց այն կենդանի էակ էր՝ հրե շնչով, որ ժայթքում էր նրա քթից ու բերանից: Ես հավատում էի, որ, եթե նույնիսկ հեռվից նրան նայեմ, աչքերիս մեջ կմխրճի սրածայր ու այ-րող ինչ-որ բան: Իսկ հետո, եթե նաև անմտություն ունենայի նրա դռանը մոտենալ, ինձ կսպանի:

Սպասեցի մի պահ՝ տեսնելու համար՝ Լիլան միտքը փոխե՞լ է, հե՞տ է դառնում: Գիտեի՝ ինչ էր ուզում, իզուր հույս էի փայփայում, թե կմոռանա, բայց ո՛չ, ո՛չ:

Փողոցի լապտերները դեռ չէին վառվում, ոչ էլ աստիճանների լույսերը: Պատուհաններից ջղային ձայներ էին լսվում, նրան հետևելու համար պետք էր կապտավուն լույսով ողողված բակից քայլ անել դեպի շքամուտքի խա-վարը: Երբ վերջապես ներս մտա, սկզբում ոչինչ չտեսա, միայն զգացի հին իրերի մգլահոտն ու ախտահանիչ քլորահոտը և հարմարվելով մթությանը հայտնաբերեցի Լիլային՝ նստած առաջին սանդղահարթակի առաջին աս-տիճանին. նա մի պահ կանգնեց, և մենք սկսեցինք բարձրանալ:

Առաջանում էինք պատին հպվելով, նա՝ երկու աստիճան առաջ, ես՝ եր-կու աստիճան հետ, ես՝ ներքուստ պայքարելով կրճատե՞լ տարածությունը, թե՞ թողնել, որ ավելանա: Ես զգում էի, թե ինչպես էր ուսս քսվում ծեփա-հան պատին, մտովի կարծում էի, թե աստիճանները շատ բարձր են, ավե-լի բարձր մեր շենքի աստիճաններից:

Դողում էի՝ ոտնաձայն կամ աղմուկ լսելիս, ինձ թվում էր, թե դոն Աքի-լեն է, որ թիկունքից կամ դիմացից մեր դեմ է հառնում՝ երկար, մեծ դա-նակը ձեռքին, որով հավի կուրծքն են բացում: Տապակած սխտորի հոտ էր գալիս: Մարիան՝ դոն Աքիլեի կինը, ինձ կդնի եռացող ձեթով թավայի մեջ, նրա տղաներն ինձ կխժռեն, իսկ ինքն ուղեղս կխժռի, ինչպես հայրս է անում արքայաձուկ ուտելիս:

Հաճախ էինք կանգ առնում, և ամեն անգամ ինձ հուսադրում էի, որ Լի-լան կորոշի հետ դառնալ: Ես շատ էի քրտնել, իսկ նա՝ չգիտեմ: Ժամանակ առ ժամանակ վեր՝ ինչ-որ տեղ էր նայում, բայց չէի հասկանում, թե ուր,

ամեն մի սանդղահարթակում երևում էին միայն գորշ պատուհաններ: Հանկարծակի վառվեցին լույսերը, բայց փոշոտ լամպերն աղոտ էին լուսավորում՝ աստիճանների մեծ մասը թողնելով ստվերի մեջ, վտանգներով լի: Սպասեցինք, որ մի պահ հասկանանք՝ կարո՞ղ է դոն Աքիլեն պտտեց անջատիչը, բայց ոչինչ չէր լսվում՝ ո՛չ քայլերի ձայն, ոչ փակվող կամ բացվող դռան ճռռոց: Լիլան առաջ գնաց, ես՝ նրա հետևից:

Նա վստահ էր, որ ճիշտ է վարվում, մինչդեռ ես մոռացել էի որևէ ծանրակշիռ պատճառ և վստահաբար այնտեղ էի, քանի որ Լիլան էր այնտեղ: Մենք դանդաղորեն բարձրանում էինք, գնում մեր այն ժամանակվա սարսափներից ամենասոսկալիին ընդառաջ:

Չորրորդ սանդղահարթակում Լիլան մի անսպասելի շարժում արեց: Կանգ առավ, սպասեց և, երբ հավասարվեցի իրեն, ձեռքը մեկնեց ինձ: Դա մեկընդմիշտ փոխեց ամեն ինչ:

2

Ամեն ինչ նրա մեղքով եղավ, իսկ մինչև այդ՝ տասը օր, թե՞ մեկ ամիս, մենք չգիտեինք, չէինք մտածում ժամանակի մասին, նա իմ տիկնիկը դավաճանաբար նետել էր նկուղի խորքը: Այդժամ մենք գնում էինք վախին ընդառաջ. այն ժամանակ պարտավորված էինք իջնել, և այն էլ՝ վազքով, ո՞ւր, դեպի անհայտություն: Վերև թե ներքև, մեզ համար միևնույն էր, մեզ միշտ թվում էր, թե ընդառաջ ենք գնում սարսափելի մի բանի՝ մեզանից առաջ գոյություն ունեցած, որը միշտ հատկապես մեզ էր սպասել: Երբ աշխարհ ես եկել ոչ շատ վաղուց, դժվար է տարբերել իրական վտանգը վտանգի մասին քո պատկերացումից, գուցե դրա անհրաժեշտությունը նույնիսկ չկա: Մեծերն ապրում են այսօր՝ ապագայի սպասումներով՝ հետևում թողնելով երեկվա օրը, նախորդ օրը և կամ, առավելագույնը, անցած շաբաթը. մնացածի մասին նրանք չեն ուզում մտածել: Փոքրերը չեն հասկանում երեկվա նշանակությունը, ոչ էլ դրա նախորդ օրվա, ոչ էլ վաղվա, ամեն ինչ հստակ է. ահա ճանապարհը, շքամուտքը, ահա աստիճանները, մա՛յրդ, հա՛յրդ, սա ցերեկն է, սա՝ գիշերը:

Ես փոքր էի, և, ի վերջո, իմ տիկնիկն ինձանից ավելի շատ բան գիտեր: Նրա հետ խոսում էի, և նա էր ինձ հետ խոսում: Դեմքը ցելյուլոիդից էր,